ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ
**ԴԻՎԱՆԱՊԵՏ**

MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN
CATHOLICOSATE
**CHANCELLOR**

Թիվ 290

21 փետրվարի, 2004 թ.

ՄԵԾԱՐԳՈ
ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԻՏԱԼԻԱՅԻ ՀՀ ԴԵՍՊԱՆ
Հռոմ, Իտալիա

Մեծարգո դեսպան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստացվել է փետրվար 4 թվակիր Ձեր գրությունը Հռոմի քաղաքապետարանում ստեղծված Հռոմ Քաղաքի Կրոնական Խորհրդին իբրև Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչ անդամակցելու համար Հոգեշնորհ Տ. Արեն աբեղա Շահինյանի թեկնածության մասին:

Հղում ենք Ձեզ Վեհափառ Հայրապետի օրհնությունը և տեղեկացնում, որ Նորին Սրբությունը առարկություն չունի Հոգեշնորհ Տ. Արեն աբեղա Շահինյանի թեկնածության առնչությամբ, և Հայրապետական տնօրինությամբ Հայր Սուրբը նշանակվել է նաև Հռոմի հայ համայնքի հովիվ:

Աղոթքով առ Աստված՝ մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և հաջողություններ Ձեր գործունեության մեջ:

Աղոթարար՝

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԴԻՎԱՆԱՊԵՏ

Հեռ./Tel: (374 1) 517 100, 517 119; Ֆաքս/Fax: (374 1) 517 301; Էլ.փոստ/e-mail: Divanatun@etchmiadzin.am

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ETCHMIADZIN

Թիվ 287

20 փետրվարի, 2004 թ.

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Հայրապետական այսու գրով որոշում ենք.

Հոգեշնորհ Տ. Արեն աբեղա Շահինյանին նշանակել Հռոմի հայ համայնքի հոգևոր հովիվ:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ